ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 583-Ա « 30 » հունվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԵՆՔԵՐԻՑ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԱՎՏՈՄԱՏ ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՈՂ ՍԱՐՔԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով «Թել-Սել» բաց բաժնետիրական ընկերության գլխավոր տնօրեն Արտյոմ Ղազարյանի և իր կողմից լիազորված անձ Գևորգ Գևորգյանի դիմումները և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի հ.249-Ն որոշման հավելվածով՝

1. «Թել-Սել» բաց բաժնետիրական ընկերությանը՝ Երևան համայնքի վարչական տարածքում շենքերից, շինություններից դուրս ավտոմատ ինքնասպասարկող սարքերի միջոցով առևտուր իրականացնելու կամ ծառայություններ մատուցելու նպատակով 2026 թվականի հունվար ամսվա համար տրամադրել Երևան քաղաքի Զ.Քանաքեռցու փողոցի հ.հ.117, 151/6, 129/10, 129/11, 159/1, Ռուբինյանց փողոցի հ.հ.4/4, 8, 15/3, Դրոյի փողոցի հ.15 և հ.22/4, Պ. Սևակ փողոցի հ.հ.90/2, 106 և 51, Լեփսիուս փողոցի հ.6 11 և հ.18/1, Ծ.Աղբյուր փողոցի հ.հ.55/5, 60/3, 55/5 և հ.55/5 հ.316 տարածք, Ազատության պողոտայի հ.10 և հ.4, Լուկաշին փողոցի հ.106, Ս.Պարթև 21Ա, Մ.Բաբաջանյան 21/5, Երևան-Աշտարակ մայրուղի, Արին-Բերդ փողոցի հ. 2/1, Տիգրան Մեծ պողոտայի հ.86, Հյուսիսային պողոտայի հ.24/1, Թահիրով փողոցի հ.14, Զավարյան փողոցի հ.45, Հաղթանակ 1-ին փողոցի հ.43, Սեբաստիա փողոցի հ.30/4, Նորքի 1-ին նրբ. հ.20/1, Գյուլիքևխյան փողոցի հ.14, Մոլդովական փողոցի հ.29/5, Թևոսյան փողոցի հ.52, Վիլնյուսի փողոցի հ.55/1, Ներքին Շենգավիթ 11 փողոցի հ.39/4, Տարոնցի փողոցի հ.20/1, Սիլիկյան 7-րդ փողոցի հ.83/1 և Վերին Շենգավիթ 2-րդ փողոց հ.7/3 հասցեների դիմաց տեղադրված թվով 41 ավտոմատ ինքնասպասարկող սարքի տեղադրման թույլտվություն:

2.Ընդունել ի գիտություն, որ ավտոմատ ինքնասպասարկող սարքերի տեղադրման թույլտվության հունվար ամսվա համար սահմանված տեղական վճարը վճարված է, իսկ ընթացիկ տարվա հաջորդ ամիսների համար տեղական վճարի գումարը վճարված լինելու դեպքում՝ թույլտվությունը համարվում է երկարաձգված:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետին՝ իրականացնել հսկողություն սույն որոշման 1-ին կետում նշված «Թել-Սել» բաց բաժնետիրական ընկերության գործունեության ընթացքում Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 249-Ն որոշման պահանջների կատարման նկատմամբ:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության պետի վրա:

5.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

6.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ